ԱՍՏՂԻԿ ԱԶԻԶՅԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Միևնույն ժամանակ հոդվածում ցույց է տրվում, որ պարտադիր է հարավկովկասյան հակամարտությունների սկիզբը հստակ կանխորոշել, քանի որ նրանց մշտապես նույն հարթության վրա դիտարկելը ապարդյուն և անհեռանկար գործընթաց է: Փորձ է կատարվում հարավկովկասյան էթնոքաղաքական կոնֆլիկտների սկզբնավորման և ընթացքի համեմատական վերլուծություն իրականացնել կայսերական Ռուսաստանի, Խորհրդային միության և հետխորհրդային անկախության տարների ժամանակաշրջաններում: Եվ, վերջապես, հոդվածում կոչ է արվում զերծ մնալ պատմական փուլեր անցած հարավկովկասյան կոնֆլիկտներին գնահատականներ տալուց, մեղավորներ փնտրելուց՝ փոխարենը կենտրոնանալով կարգավորման հանգեցնող ուսումնասիրության մեջ:

Կովկասը բացառապես աշխարհագրական կամ աշխարհաքաղաքական հասկացություն չէ: Այն իրենից ներկայացնում է պատմական, պատմա-քաղաքական կատեգորիա: Կովկասի հիմնական յուրահատկությունը պայմանավորված է Եվրոպայի և Ասիայի, Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթական խաչաձևումներով: Բնական է, որ նման աշխարհագրական, ինչպես նաև պատմամշակութային ընդհանրությունը համընդհանուր իրավիճակներով էին համակել Կովկասի բազմաթիվ էթնոսներին և ժողովրդներին: Վերջիններս իրենց մեջ կրում են կովկասյան ավանդապաշտության կնիքը՝ արտացոլելով համակովկասյան պատմությունը: Միջկովկասյան հարաբերությունները իրենք իրենցով կազմում են Կովկասի պատմությունը, որում զգալի կշիռ են կազմում էթնոքաղաքական կոնֆլիկտները: Վերջիններս վերափոխման և մեկ փուլից մյուսին անցնելու լայն դաշտ ունեն Կովկասում:

Հոդվածի բուն նպատակն է ներկայացնել Հարավային Կովկասի էթնոքաղաքական կոնֆլիկտների սկզբնավորման պատմական նախադրյալները և դրսևորումները: Միաժամանակ փորձ է արվում խորհրդային ժամանակաշրջանում հասունացած հարավկովկասյան էթնոքաղաքական կոնֆլիկտները ուսումնասիրել ինչպես որպես միասնական տարածաշրջանի անկայունություն, այնպես էլ առանձին և մասնավոր դեպքեր՝ համոզված լինելով, որ էթնոքաղա-

քական կոնֆլիկտների երկարամյա միանման ընկալումը անորոշ ժամանակով հետաձգում է Հարավային Կովկասի էթնոքաղաքական կոնֆլիկտների կարգավորումը՝ Կովկասը հարատև պահելով «բոլորի պատերազմը բոլորի հետ» իրավիճակում: Հոդվածն անմասն չէ հարավկովկասյան կոնֆլիկտների խորհրդային նախադրյալները հետազոտելուց՝ փորձելով զուգահեռականներ անցկացնել կոնֆլիկտների կարգավորման խորհրդային մոտեցումների միջև: Հետխորհրդային ժամանակաշրջանը, իր հերթին, յուրովի փուլ էր կոնֆլիկտների դրսևորումների համար: Սույն հոդվածում ցույց է տրվում, որ կոնֆլիկտների, առավել ևս էթնոքաղաքական կոնֆլիկտների առկայությունը պարտադրում է խորքային ուսումնասիրություն, քանի որ վարչակարգային փոփոխությունները հիմնականում անփոփոխ են թողնում նման կոնֆլիկտների շարժընթացն ու ընկալումը:

Հիրավի, Անդրկովկասը հետազոտողի համար լուրջ դժվարություն է: Դա, թերևս, պայմանավորված է նրանով, որ Կովկասը հագեցած է էթնիկ բազմազանությամբ:

Անդրկովկասի էթնոքաղաքական կոնֆլիկտների ուսումնասիրությունը ապացուցում է, որ վերջինիս հիմքում ընկած է քաղաքական, սոցիալ-տնտեսական, գաղափարա-հոգեբանական հարցեր պարունակող բազմակողմ կոնֆլիկտը: Կարծում ենք Հարավային Կովկասի էթնոքաղաքական կոնֆլիկտների հասունացմանը մեծապես նպաստել են այն կողմնորոշումները և ստերեոտիպերը, որոնք արդիականացրել են տարածաշրջանի քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, էթնոմշակութային հակասությունները և տարբերությունները: Փաստորեն հարավկովկասյան էթնոքաղաքական կոնֆլիկտները իրենց սկզբնական փուլում իրենցից ներկայացրել են պարզապես կոնֆլիկտներ և միայն որոշակի պատմական ժամանակաշրջան ապրելուց հետո վերածվել են էթնոքաղաքական կոնֆլիկտների, որոնցում էական դեր են խաղում պատմական փաստը և տարածաշրջանի յուրահատկությունները: Էթնոքաղաքական կոնֆլիկտների հետազոտմամբ զբաղվող որոշ մասնագետների կարծիքով Անդրկովկասի ճգնաժամային իրավիճակը սկզբնավորվել է Ռուսական կայսրության միջէթնիկ հարաբերությունների ժառանգությամբ և ԽՍՀՄ կազմավորմամբ[1]: Կարծում ենք նման դիտարկումը միակողմանի է և ոչ սպառիչ: Համաձայն ենք Ա. Ն. Կոսոլապովի այն կարծիքին, որ Անդրկովկասի էթնոքաղաքական կոնֆլիկտների արմատները սկզբնավորված են ոչ թե/միայն խորհրդային, այլև առավել վաղ ժամանակաշրջանից[2]:

---

[1]Накопия Б.Т. Грузино-абхазский конфликт: поиск путей урегулирования. Автореферат диссертации на соискание уч. степени канд. полит. наук. - М.1997. С. 2 – 3.

[2] Косолапов Н.А. Конфликты постсоветского пространства и современная конфликтология //

Գաղտնիք չէ, որ Անդրկովկասը որպես էթնոքաղաքական տարածք միշտ բարդ և խճճված խնդիրների մեջ է եղել՝ հանգեցնելով պատերազմների, բռնությունների և տեղահանությունների: Միաժամանակ, տարածաշրջանի բազմէթնիկության մասին են վկայում Հերոդոտոսը, Ստրաբոնը և այլոք: Իսկ ընդհանուր առմամբ Անդրկովկասի էթնոպատմական գործընթացների մասին շատ քիչ տեղեկություններ կան, քանի որ հույն-հռոմեացի և արաբ ուսումնասիրողները մակերեսային տեղեկություններ են տալիս մինչ միջնադար անդրկովկասյան էթնոհրավիճակի մասին:

7-րդ դարից սկսած Անդրկովկասը ենթարկվում է արբական խալիֆայության հարձակմանը, որի հետևանքով Արևելյան Անդրկովկասը իսլամացվում է[3]: Եվ միայն Աբխազիայի թագավորությանն է հաջողվում պահպանել անկախություն արաբական խալիֆայությունից[4]:

11-րդ դարի կեսերից սկսված թուրք-սելջուկների արշավանքներով նոր էջ է բացվում Անդրկովկասի կյանքում: Ներկայիս Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տարածքներում սելջուկների վերաբնակեցումը փոխում է Անդրկովկասի ժողովուրդների էթնիկ կազմը: Միաժամանակ, գրականության մեջ հայտնի տեղեկությունների համաձայն տեղի է ունենում բնիկ ալբանական բնակչության թուրքացում, որի հետևանքով էլ կազմավորվում է թուրքալեզու ադրբեջանական ազգությունը[5]:

Սակայն, Անդրկովկասում արշավանքները դեռևս դադարելու միտում չունեին: Այսպես, 12-րդ դարում սկսված մոնղոլական արշավանքների հետևանքով տեղի է ունենում օսերի զանգվածային վերաբնակեցում Հյուսիսային Կովկասից Արևելյան Վրաստան, որի հետևանքով մի մասը ձուլվում է բնիկ վրացիներին: Ի վերջո ձևավորվում է օսական էթնոսի Հարավային հատվածը, որոնք սերտ էթնոմշակութային հարաբերություններ էին պահպանում Հյուսիսային Կովկասի օսերի հետ[6]: 1774 թ. ռուս-օսական բանակցությունների արդյունքում Հյուսիսային Օսիան կամովին ընդգրկվում է Ռուսական կայսրության կազմում: Վրացական թագավորությունն իր հերթին 1783 թ. Գեորգիևյան համաձայնագրով ընդունում է ռուսական հովանավորությունը, որին հաջորդում է 1801 թ. Ռուսաստանի կազմում Վրաստանի ընդգրկումը: 1864 թ. Հյուսիսային Կովկասի ժողովուրդների դեմ մղվող Կովկասյան պատերազմի ավարտին

Мировая экономика международные отношения. 1995. № 10. С. 5.

[3] Гаджиев К.С. Геополитика Кавказа. - М.: «Междунар. Отношения», 2001. С. 15.

[4] История Абхазии / Под. ред. З. В. Анчабадзе. - Сухуми: «Алашара», 1986. С. 45-49.

[5] Алекперов А.К. Исследования по археологии и этнографии Азербайджана. - Баку: АН АзССР, 1960. С. 92 – 93.

[6] Кузнецов В.А. Алания в X – XIII веках. - Орджоникидзе: «Ир», 1971. С. 41 – 42.

Ռուսական կայսրության կազմում է հայտնվում նաև Աբխազիան[7]:

Ռուսական կայսրությունը Անդրկովկասի հանդեպ հավակնություն ունեցող երկրներին աստիճանաբար հեռացնում էր նման հավակնություններից: Հերթական հավակնորդներից էր Իրանը, ով, 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում ջախջախիչ պարտություն կրելով, վերջնականապես հրաժարվեց Արևելյան Անդրկովկասից[8]:

Չնայած Անդրկովկասի համար մշտապես ընթացող պատերազմներին, մինչ 20-րդ դարը տարածաշրջանի էթնոքաղաքական իրավիճակը կայուն էր: Բացառություն էին 1905-1907 թթ. հայ-ադրբեջանական բախումները, որոնք հիմնականում ընթացան Բաքվում և Ղարաբաղում՝ խլելով հազարավոր կյանքեր:

Առաջին Համաշխարհային պատերազմը շրջադարձային իրավիճակ է ստեղծում Անդրկովկասում՝ վերջինիս ռազմական գործողությունների կիզակետի վերածելով: Հերթական բռնությունը 1915 թ. երիտթուրքերի կողմից հայերի Ցեղասպանությունն էր, որը բացի բարոյական և մարդկային անհերելի վնասից, վնասեց նաև տարածաշրջանի էթնիկ տեղայնացվածությանը: Արևմտյան Հայաստանից հայերը գաղթեցին ինչպես արտասահման, այնպես էլ տարածաշրջանի բազմաթիվ երկրներ[9]:

Ինչպես տեսնում ենք, 20-րդ դարը Անդրկովկասին հագեցած անհանգստությունների ու անընդհատ էթնիկ խառնաշփոթի մեջ էր պահում: Կոնֆլիկտներ, որոնք արդեն սկզբնավորվել և հարմար դրսևորման պահի էին կարծես սպասում: Եվ ահա 1917թ. Փետրվարյան հեղափոխությունը Անդրկովկասում սկզբնավորեց երեք անկախ պետություններ՝ Հայաստան, Ադրբեջան և Վրաստան: Արտաքին և ներքին ինքնուրույն քաղաքականություն վարելու գայթակղությունը նորանկախ հանրապետություններին միանգամից հիշեցրեց էթնիկ խնդիրների մասին: Առաջացած և խորացող խնդիրների լուծման համար կազմավորված Անդրկովկասյան Դաշնությունը, ներառելով նորանկախ պետություններին իր կազմի մեջ, ունակ չի գտնվում որևէ հարց կարգավորելու: Տարածաշրջանում իրավիճակը գնալով բարդանում էր նաև ելնելով 1918-1920 թթ. Անգլիայի, Գերմանիայի և Թուրքիայի կողմից Անդրկովկասը բռնազավթելու փորձերից: Այսպիսով, դժվար չէ նկատել՝ էթնոքաղաքական կոնֆլիկտներին խթանող ինչ պայմաններ էին ստեղծվում Անդրկովկասում:

---

[7] Дзидзария Г.А. Махаджирство и проблемы истории Абхазии XIX столетия. - Сухуми: «Алашара». 1982. С. 493.

[8] Дегоев В.В. Кавказский вопрос в международных отношениях 30 – 60 годов XIX века. - Владикавказ: СОГУ. 1992. С. 8.

[9] Геноцид Армян в Османской империи / Под. ред. М.Г. Нерсесяна. - Ереван: Айастан, 1982. С. 4 – 8.

Հետաքրքիր է, որ Անդրկովկասում տիրող անհանգիստ իրավիճակից առաջինը փորձում է օգտվել Ադրբեջանը, որը որպես պետություն գոյություն չուներ մինչ 20-րդ դարը: Ադրբեջանցիները, սերված լինելով թուրքալեզու ժողովուրդներից և չունենալով իրենց ազգային գիտակցությունը, շտապեցին բոլորի աչքին ներկայանալ միասնական, ձևավորված ազգ: Կարծում ենք՝ դա արհեստականորեն հնարավոր չէր կառուցել, քանի որ գոյություն ունեն փուլեր և փորձություններ, որոնցով պետք է անցնի ցանկացած էթնիկ խումբ ազգ և պետություն դառնալուց առաջ: Ադրբեջանցի հեղինակներից ոմանք նույնպես ընդունում են, որ ադրբեջանական էթոսը Անդրկովկասում հայտնվել է բավական ուշ: Այսպես, Ա. Ալեքպերովի տեղեկություններով՝ ադրբեջանցիները Անդրկովկասում լայնորեն աչքի են ընկեր 1936 թ.ից սկսած[10]:

Ուշագրավ է, որ Ադրբեջանը, ստանալով Թուրքիայի, ինչպես նաև Անգլիայի օժանդակությունը, 1919թ. հայաբնակ Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի, ինչպես նաև վրացական Բաթումիի հանդեպ հավակնություններ առաջադրեց Ազգերի Լիգայում, որը մերժեց Ադրբեջանի կառավարությանը այն պարզ հիմնավորմամբ, որ այդ պետությունը հավակնում էր այնպիսի տարածքների, որոնց նկատմամբ վերահսկողություն չուներ[11]: Մերժում ստանալով, ադրբեջանցիները էլ ավելի հաճախակի դարձրեցին բախումները հայերի հետ: Թուրքական զորքերի՝ Անդրկովկասից հեռանալուց հետո հայկական քաղաքական ազդեցության ներքո գտնվող Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես անցնում են բրիտանական էքսպեդիցիոն կորպուսի վերահսկողության տակ[12]: Այդ պահից ի վեր ավելի սաստկացան Ղարաբաղի համար մղվող հակասությունները, քանի որ Ադրբեջանում ձգտում էին պատմական փաստ ներկայացնել Ղարաբաղի պատկանելությունը իրենց, իսկ հայերը մինչև վերջ տրամադրված էին անկախության: Կարծում ենք, նման ժամանակաշրջան ապրող ցանկացած ժողովուրդ, էթնիկ խումբ իրավունք ուներ ստեղծելու իր անկախությունը՝ մանավանդ եթե հաշվի առնենք, որ մինչ 1920 թ.-ն Լեռնային Ղարաբաղը երբեք Ադրբեջանի մաս չի կազմել, իսկ 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիում անցկացված Ղարաբաղի հայության առաջին համագումարով ԼՂ հայտարարվել էր անկախ վարչաքաղաքական միավոր: «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը» ստեղծված պայմաններում 1919թ. օգոստոսի 22-ին ստիպված համաձայնագիր է ստորագրում ԼՂ Հայոց Ազգային

---

[10] Алекперов А. К. Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку 1960. С. 71

[11] Admission of Azerbaidjan to the League of Nations: Memorandum By the Secretary General League of Nations. // Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ, Եր., 2006 թ., էջ 293.

[12] Гарибджанян Г.Б. Страницы истории армянского народа. - Ереван: Гитутюн. 1998. С. 178.

խորհրդի հետ, որով ադրբեջանական ուժերը չէին մտնելու ԼՂ տարածք, իսկ երկրի լեգիտիմ ուժերը չէին ճանաչելու Հայոց Ազգային խորհուրդը և համագումարները: Ադրբեջանական կողմի՝ համաձայնագրի կետերի պարբերաբար խախտումների հետևանքով 1920թ. ապրիլի 25-ին կայացած Ղարաբաղի հայության 9-րդ համագումարով Հայոց Ազգային խորհուրդը հռչակում է ԼՂ միացումը ՀՀ-ին՝ որպես նրա անբաժան մաս[13]:

Մյուս կողմից, անկայուն իրավիճակ էր Վրաստանի տարածքում: 1918թ. Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, գերմանական կառավարության քաղաքական օժանդակություն ստանալով, վերահսկողություն էր հաստատել ողջ Աբխազիայի վրա, որն այդ ժամանակ գտնվում էր Լեռնականների հանրապետության կազմում[14]: Վրացական մենշևիկյան կառավարությունը բռնությամբ էր փորձում լուծել նաև հարավային օսերի հարցը: 1920-1921 թթ. վրացական «ազգային գվարդիայի» զորամիավորումները «բոլշևիզացման» դեմ պայքարի կարգախոսով լայնամասշտաբ ռազմական գործողություններ ծավալեցին օսերով բնակեցված տարածքներում[15]: Ուշագրավ է, որ վրացական իշխանությունները անգամ չէին թաքցնում իրենց նպատակները՝ հայտարարելով, որ մտադիր են օսերով բնակեցված Քարթլին բնակեցնել վրացական այլ շրջաններից տեղափոխված վերաբնիկներով:

1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվեցին: Այսպիսով, առանց միջազգային ճանաչման և լեգիտիմ սահմաններ ունենալու ավարտվեց «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության» կառավարման ժամանակաշրջանը: 1920թ. ապրիլին Ադրբեջանի տարածքում ռուսական ուժերի կողմից վերահսկողություն սահմանելուց հետո վերջինիս կողմից հայկական դաշնակցականներին վերջնագիր է ներկայացվում, համաձայն որի Ղարաբաղը և Զանգեզուրը պետք է ազատվեն հայկական ուժերից: Նույն թվականի օգոստոսի 10-ի համաձայնագրով Ղարաբաղը և Զանգեզուրը անցնում են Խորհրդային Ռուսաստանին[16]: Հետաքրքիր է, որ չնայած դեպքերի նման ընթացքին, 1920թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմը հայտարարությամբ հանդես եկավ, համաձայն որի վիճելի համարվող Զանգեզուրը և Նախիջևանը անցնում էին արդեն խորհրդային դարձած Հայաստանին, իսկ Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք էր տրվում՝ հաշվի առնելով, որ վերջինիս բնակչության զգալի մասը հայեր էին: Վերոնշյալ հայտարարությանը

---

[13] Բալայան Վ. Արցախի պատմություն, Եր., 2002 թ., էջ 303:

[14] Деникин А. Очерки русской смуты. - Минск: «Хорвест», 2002. С. 271, 280.

[15] Цховребов В.Д., Санакоев М.П. Южная Осетия в период трех революций (1900-1921г.) - Тбилиси. Мецниерба, 1981. С. 194 – 197.

[16] Микаэлян К. Преодоление заблуждения // Содружество-НГ. 1999. Сентябрь. С. 11.

հաջորդում է Ս. Օրջոնիկիձեի 1920թ. դեկտեմբերի 1-ի հայտարարությունը, ըստ որի ԼՂ մտնում է Խորհրդային Հայաստանի կազմ: Այդ որոշումը 1920 թ. դեկտեմբերի 4-ին հաստատում էր «Պրավդա» թերթը, ինչպես նաև 1921 թ. հուլիսի 3-ի ՌԿ(բ)Կ նիստը: Սակայն այդ ամենը կարճ ժամանակահատվածում գլխիվայր վերանայվեց. Քաղբյուրոն 1921թ. հուլիսի 5-ին որոշում է ընդունում, համաձայն որի ԼՂ, ինքնավարություն ստանալով, ընդգրկվում է Ադրբեջանի կազմում: Այդ որոշումը ղարաբաղյան հակամարտության առաջացման իրավաքաղաքական հիմքերից մեկն է, քանի որ դա միակ փաստաթուղթն է, որով Ղարաբաղը դիտվում էր Ադրբեջանի ԽՍՀ կազմում, սակայն նույնիսկ այդ միակ փաստաթուղթը իրավականորեն խոցելի է: Այսպես, ըստ Խ. Գալստյանի՝ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն տարածքային խնդիրներ լուծելու իրավասություն չի ունեցել, միևնույն ժամանակ, 1921թ. հուլիսի 5-ի որոշումն ընդունվել է առանց քվեարկության, որը ընթացակարգի լուրջ խախտում է[17]: Կարծում ենք՝ նույնիսկ եթե անտեսելու լինենք վերոնշյալ որոշմանը կասկածի տակ դնող բոլոր հանգամանքները, ԼՂ ներկայիս իրականությունը բացառում է ադրբեջանական բոլոր տեսակի հավակնությունները, քանի որ ներկայիս Ադրբեջանը հանդիսանում է 1918-1920 թթ. «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության» իրավահաջորդը, որի գոյատևման տարիներին, ինչպես արդեն նշել ենք, ԼՂ Ադրբեջանի մաս երբևէ չի կազմել: Ադրբեջանական կողմը, իր հերթին, մատնացույց է անում Կովբյուրոյի որոշման տեքստը, որում ձևակերպված է ԼՂ «թողնել» խորհրդային Ադրբեջանի կազմում: Կարծում ենք դա լուրջ հիմնավորում չէ հենց այն պատճառով, որ համաձայնագրում խոսք էր գնում հայերի և մուսուլմանների, ոչ թե ադրբեջանցիների մասին: Ամեն դեպքում, ղարաբաղցիները, ի տարբերություն ադրբեջանական կողմին, չին կառչում որևէ փաստից, մանավանդ թերի բովանդակությամբ, այլ շարժվում էին առաջ՝ ամրապնդելու իրենց ազատության իրավունքը: Հարկ է նշել, որ իրականում ԼՂ Ադրբեջանի կազմում եղած ողջ ընթացքում փորձել է ինքնավարությունը ընդարձակել: Այսպես, 1923 թ. հուլիսին կազմվում է ԼՂ Ինքնավար շրջանը, որը 1937 թ. վերանվանվում է ԼՂ Ինքնավար Սարգի[18]:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այն Անդրկովկասի հանրապետություններից վերջինը խորհրդայնացավ՝ 1921թ. փետրվարին: Նույն թվի մարտի 31-ին Աբխազիան հռչակվեց անկախ հանրապետություն, որը բոլշևիկյան կառավարությունը պաշտոնապես ճանաչեց: Ուշագրավ է, որ մինչ 1931 թ. Աբխազիան շարունակում էր միութենական հանրապետություն մնալ: Եվ միայն

---

[17] Գալստյան Խաչիկ. Քաղաքական բանակցություններ: Տեսություն և պրակտիկա/ Խաչիկ Գալստյան.-Եր.: Վան Արյան, 2007.228 էջ, էջ 139:

[18] Дипломатический словарь / Под ред. А.А. Громыко. Т. 3. - М.: Наука. 1986. С. 313.

այդ թվից ի վեր այն կարգավիճակի ցածրացման փոփոխություն է կրում՝ դառնալով Վաստանի կազմում ինքնավար միավորում[19]: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ ինչպես ԼՂ, այնպես էլ Աբխազիայի ինքնուրույնությունը պատմականորեն միշտ ընդծեռնվել է, սակայն այն արհեստականորեն անհայտ կամ անհասկանալի պատճառներից ելնելով սահմանափակել են մեկ կամ մի քանի բախտախնդիրներ:

Ի տարբերություն աբխազների՝ առավել բարենպաստ իրավիճակ էր ստեղծված օսերի համար: Այսպես, 1922թ. ապրիլին կենտրոնական Վրաստանի օսերով բնակեցված տարածքներից կազմվում է Հարավօսական ինքնավար մարզը: Անկասկած դա ռուս-վրացական համաձայնության հետևանք էր, որով բաժանվել էին Հյուսիսային և Հարավային Օսիայում ազդեցության լծակները: Միաժամանակ, Հարավօսական ինքնավար մարզի մեջ էին մտնում Ցխինվալին և մի շարք տարածքներ, որոնք առավելապես վրացաբնակ էին, որն առավել էր բարդացնում նորակազմ մարզի էթնոժողովրդագրական իրավիճակը[20]:

Հարավկովկասյան էթնոքաղաքական կոնֆլիկտները միջխորհրդային ժամանակաշրջանում հատել էին կամայականությունների շեմը: Նրանք դարձել էին անկառավարելի և ինքնաբուխ: Ռուսական կայսրությունը այլևս ունակ չէր կարող գտնվել դրության ոչ միայն շտկման, այլև ցանկացած փոփոխության հարցում: Կարծում ենք՝ Հարավային Կովկասը 20-րդ դարի 20-ականներին գտնվում էր փլուզված կայսրությանը ներդաշնակ իրավիճակում, որտեղ կային բազում խնդիրներ, որոնք ստեղծում էին նորերը: Եվ ահա պատմական թատերաբեմը լքած Ռուսական կայսրությանը փոխարինելու եկավ ԽՍՀՄ՝ ժառանգելով կայսրության չկարգավորված խնդիրները և բարդությունները: ԽՍՀՄ իր տարածքով աշխարհի ամենամեծ պետությունն էր, որը գոյատևեց 1922-1991 թթ: Ըստ խորհրդային վերջին Սահմանադրության (հիշեցնենք, որ գոյություն են ունեցել 3 խորհրդային Սահմանադրություններ՝ 1924, 1936, 1977 թթ.)՝ ԽՍՀՄ հռչակվել էր որպես «միասնական միութենական բազմազգ և սոցիալիստական» պետություն[21]:

ԽՍՀՄ, բազմազգ և փաստացի դաշնային պետություն լինելով, բավական խճճված վարչատարածքային կառույց էր իրենից ներկայացնում: Այն հիերարխիկ բնույթ էր կրում. Խորհրդային դաշնային սուբյեկտները 5 ազգային-պետական կառույցների էին բաժանվում՝ միութենական հանրապետություն-

---

[19] Ардзинба В. «В возобновлении грузино-абхазского конфликта никто не заинтересован» // Независимая газета. 2000. 18 мая. С.5.

[20] Жоржалиани Г., Гоидзе Л., Лекишвили С. Исторические и политико-правовые аспекты грузино-осетинского конфликта. - Тбилиси: «Самшобло». 1995. С. 10.

[21] Сергей Маркедонов Турбулетная Евразия, Москва 2010, С. 12.

ներ, ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր, ազգային շրջաններ և օկրուգներ[22]: Մտավորականությունը, ինչպես նաև առանձին վարչական-տարածքային միավորումները պարբերաբար դիմում էին միութենական կենտրոնին՝ խնդրելով վերանայել տարածաշրջանի վարչա-տարածքային սահմանները, սակայն Մոսկվան, կադրային և էթնոմշակութային քաղաքականությունից զատ չէր շտապում փոփոխություններ կատարել[23]: Նման իրավիճակը վտանգավոր էր նրանով, որ իշխանության կողմից ցանկացած անուշադրություն օգտագործվելու էր ազատության հասնելու համար: Ասվածից կարելի է եզրակացնել, որ ԽՍՀՄ իշխանությունները չէին գիտակցում ազգային հարցի լրջությունը և, ինչպես մյուս տնտեսական ու քաղաքական խնդիրները, փորձում էին «պլանավորման» շրջանակներում կաղապարել նման զգայուն խնդիրները:

Ռուսական կայսրությանը հաջորդած ԽՍՀՄ սեփական տարածքում ընդգրկված ազգերի համար գրեթե ոչինչ չփոխեց: Դա բնական պետք է համարել, քանի որ չնայած լուրջ գաղափարական և գաղափարա-քաղաքական հակասությունների և տարբերությունների, նրանք բազմաթիվ հատկանիշներով նույնն էին: Այսպես, և Ռուսական կայսրությունը, և ԽՍՀՄ բազմէթնիկ էին և համաշխարհային աշխարհաքաղաքական գործընթացներում կարևոր դեր էին խաղում: Կարծում ենք՝ վերոնշյալ երկու միավորումների ներքաղաքական վարվելակերպի մեջ էական տարբերություն գոյություն չուներ, տարբեր ին պարզապես զսպման մոտեցումները: Օրինակ, եթե կայսրության ներսում ցանկացած դժգոհություն կտրուկ ուժով էր վերացվում, ապա Խորհրդային միությունը միանգամից է դնում կոլեկտիվ շահի կարևորության հարցը՝ այսպիսով անհատական իրավունքը ստորադասելով համընդհանուրին: Հենց սա էլ պետք է հող նախապատրաստեր էթնոազգային շարժումների համար՝ հետագա խորը կոնֆլիկտի բերելով: Ինչպես ռուսական կայսրությունը, այնպես էլ ԽՍՀՄ այդպես էլ չկարողացան միասնական քաղաքական ազգ կազմավորել: ԽՍՀՄ իր ողջ գոյության ընթացքում կամա թե ակամա խորացնում է այն բոլոր խնդիրները, կոնֆլիկտային իրավիճակները, որոնք արդեն տեղ էին գտել Հարավային Կովկասում: Իսկ «Վերակառուցման» ընթացքում կոնֆլիկտները պարզապես լայնամասշտաբ դրսևորման փուլ են մտնում: Այդ ամենը ապացուցելու էր գալիս հայտնի փիլիսոփա Ալեքսիս դե Տոկվիլի պնդումն առ այն, որ

---

[22] Дипломатия. 2-е изд., доп.-М.: Аспект-Пресс, 2009.-256с.

[23] Восканян С.С. Очерк истории армяно-азербайджанских этнополитических отношений. - Волгоград: ВолГУ. 2002. С. 167.

«տկար վարչակարգի համար վատագույն ժամանակները սկսվում են այն ժամանակ, երբ այն ջանքեր է սկսում կիրառել ուղղվելու համար»[24]:

Կարծում ենք՝ ԽՍՀՄ երկար տարիներ պարզապես մսխիչ արտաքին քաղաքականություն էր վարում, որը կենտրոնացած էր ոչ թե նպատակի, այլ ցույց տալու վրա: Իհարկե դա չէր կարող չվնասել ներքին խնդիրների կարգավորմանը, որոնք օրեցօր էին բարդանում: Ազգային անջատողական քայլերին խորհրդային իշխանությունները լուրջ չէին մոտենում՝ համարելով դրանք ժամանակավոր դժգոհություններ: Անգամ Բ. Ն. Ելցինը իր իշխանավարության սկզբում կոչ էր անում անջատողական ուղի բռնած ազգերին «վերցնել այնքան ինքնիշխանություն, որքան ունակ կլինեն կուլ տալու»[25]:

Մյուս կողմից, Խորհրդային միության խառնաշփոթ քաղաքականությունը ծեռնտու պահ էր ազգային անջատողական արշավներ սկսելու համար: Աստիճանաբար ամրապնդվում էր ազգային ինքնագիտակցությունը, որն էլ ձևավորում էր ազգային շարժումը: Մյուս կողմից, նախորդ դարի 90-ականներից վտանգավոր իրավիճակ էր ստեղծվել ԽՍՀՄ համար, քանի որ ծայրամասային հանրապետությունները իրենց կրթական ցուցանիշի, կյանքի տևողության, ծնելիության, արտադրական զարգացվածության ցուցանիցների բարձր լինելու հաշվին հայտնվել էին առավել նպաստավոր իրավիճակում, քան երկրի աշխարհաքաղաքական միջուկը կազմող շրջանները: Այսպիսով, ԽՍՀՄ, հայտնվել էր մի այնպիսի իրավիճակում, որից ոչ թե անկում են ապրում, այլ փլուզվում են, աստիճանաբար և շարունակական բացասական ազդեցությամբ լի: Այնուամենայինվ, կարծում ենք՝ աշխարհի քարտեզից ԽՍՀՄ վերացումը միակողմանի ուսումնասիրման հարց չէ, քանի որ այն իրենից ներկայացնում է և՝ «20-րդ դարի խոշոր աշխարհաքաղաքական աղետ» (համաձայն Ռուսաստանի Դաշնության երկրորդ նախագահ Վլադիմիր Պուտինի), և՝ «չարիքի կայսրության» ավարտ (ինչպես փաստում էր ԱՄՆ 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանը)[26]:

Բնական է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հարավկովկասյան էթնոքաղաքական կոնֆլիկտները քաղաքական և դիվանագիտական առումներով փակուղու մեջ հայտնվեցին, քանի որ կոնֆլիկտակիրների միջև բացակայում էին անգամ դիվանագիտական հարաբերությունները: Ըստ «Ֆրիդմ Հաուս» միջազգային կազմակերպության տվյալների՝ ԽՍՀՄ փլուզմամբ գրեթե բոլոր հետխորհրդային հանրապետություններում «ժողովրդավարության անկում»

---

[24] Де Токволь А. Старый порядок и революция.- М.: Московский философский фонд, 1997. С. 14.

[25] Косов Ю. В., Торопыгин А. В. Содружества Незаависимых Государств:Институты, интеграционные процессы, конфликты и парламентская дипломатия.- 2-е изд., доп.-М.: Аспект Пресс, 2009.-256 с., с.115

[26] Сергей Маркедонов Турбулетная Евразия, Москва 2010, С. 9.

սկսվեց[27]: Կարծում ենք՝ վերոնշյալը հերքում է այն տեսակետը, որ ժողովրդավարությունը լիակատար ազատությամբ և ինքնագործունեությամբ է պայմանավորված: Ինչևէ, հետխորհրդային հանրապետությունների համար ԽՍՀՄ փլուզումը ազատ գործերու հնարավորություններ է ընդծեռնում, սակայն դա առավելապես վնասում է նրանց տնտեսական, քաղաքական հետագա կայունությանը: Փոխարենը էթնիկ ազգայնականությունը պետական կառուցվածքի հիմք է դառնում, որն էլ նորանկախ հանրապետություններին դատապարտում է ոչ լեգիտիմության: Նորանկախ հանրապետությունները, հիրավի, հնարավորություններից բարձր խնդիրներ դնելով իրենց առջև, անջատողականության վտանգի առջև են կանգնում, ուստի տարածքային ամբողջականության սկզբունքը նրանց համար գերխնդիր է դառնում:

Այսպիսով, ԽՍՀՄ փլուզումն ուղեկցվում է մի շարք հակամարտություններով, որոնցից որոշները զինված ընթացք են ստանում, ինչպիսիք են հարավկովկասյան երեք էթնոքաղաքական կոնֆլիկտները, որոնք մյուսներից առանձնանում են նրանով, որ բուռն չեն իրենց կոնֆլիկտային կամ խաղաղ փուլերում: Դա բացատրվում է նրանով, որ զինված հակամարտությունները միանշանակ և միանձն ընկալվող երևույթ չեն: Այդ հակասությունները երկու փուլեր են ներառում[28]՝

- Ռազմական բախում
- «Սառեցված» կոնֆլիկտի շրջան (երբ ռազմական գործողություններ չեն ընթանում, սակայն խնդիրը քաղաքականապես շարունակում է չլուծված մնալ, այսինքն բացակայում է խնդրի կարգավորման փոխզիջումային տարբերակը):

Հարավկովկասյան երեք հակամարտությունները խորհրդային վարչակարգի փլուզումից հետո բռնում են միևնույն՝ «կարճաժամկետ ինքնավարության», ճանապարհը: Հաջորդական բնույթ էին կրում անգամ ռազմական բախումները: Այսպես, վրաց-օսական կոնֆլիկտն առաջին հետխորհրդային հակամարտությունն էր Վրաստանում, որը 1991թ. հունվարից-1992թ. հուլիսը լայնամասշտաբ ռազմական բախման փուլ է մտնում: Վրաց-աբխազական հակամարտությունը հաջորդում է օսական ռազմական բախմանը: 1991-1994 թթ. ընթանում էին նաև ԼՂ շուրջ ռազմական գործողությունները:

Հիրավի 20-րդ դարի 90-ականները յուրահատուկ և նոր էջ էր բացում Հարավային Կովկասի պատմության մեջ: Ուշագրավ է, որ ազգային շարժում-

---

[27] Տե՛ս «Ազատություն և խաղաղություն» հոդվածում, http://www.freedomhouse.org/template.cfm?page=15

[28] Wallenstein P. Sollenberg M. Armed Conflict. 1989/1999// Journal of Peace Research. 2000. № 5(37). Pp. 635-649.

ների հետևանքով գոյացած քաղաքական միավորումները պայքարում էին սեփական անկախության համար՝ միաժամանակ ճնշելով իրենց տարածքի ազգային փոքրամասնությունների ինքնորոշման փորձերը: Ամենևին զարմանալի չէ, որ ինքնիշխանության նոր հասած երեք հանրապետությունները անընդունակ էին ինքնուրույն կառավարելու իրավիճակը: Բնական ենք համարում այն, որ հարավկովկասյան նորանկախ հանրապետությունների տարածքներում տիրող քաոսը զուրկ է միանգամից կարգավորելու տրամաբանությունից, մանավանդ եթե հաշվի առնենք, որ կոնֆլիկտակիրները ինչպես թեժ, այնպես էլ հարաբերական խաղաղ ժամանակահատվածներում հիմնահարցերի խորքային վերլուծությամբ չէին զբաղվում: Իսկ եթե բացակայում էր կոնֆլիկտների ծագման և շարժընթացի ճիշտ վերլուծությունը, բացակայելու էին նաև դրանց կարգավորման սթափ եղանակները: Ստեղծված անկայունությունից շտապում էին օգտվել երկրների մի խումբ, որոնց հետաքրքրությունները աճել էին տարածաշրջանում, քանի որ, ի վերջո, տեղի էր ունեցել տնտեսության խորհրդային տեսակից անցում կապիտալիստական ձևի: Ուշագրավ է, որ մինչ 20-րդ դարի 80-ականների վերջը բացակայում էր խոշոր երկրների կողմից նման հետաքրքրությունը տարածաշրջանով, քանի որ Կովկասը որոշիչ դեր չէր խաղում միջազգային հարաբերություններում:

Այսպիսով, նախորդ դարի 90-ականներին վերոնշյալ տերությունների հետաքրքրվածության ավելացումը տարածաշրջանով ապացուցելու է գալիս, որ դերակատարների ավելացմամաբ կամ հերթափոխող անհնար է փոխել էթնոքաղաքական կոնֆլիկտի ընթացքը: Մյուս կողմից, նման կոնֆլիկտները սնուցվում են ոչ միայն պատմական նախադրյալներից, այլև սոցիոմշակութային, սոցիոտնտեսական և քաղաքական ոլորտների միախառնումից, որն էլ հասարակական հարաբերությունների անկայունության մշտական պատճառն է: Ի դեպ, անկայունությունը սպառնում է նաև հարակից պետություններին՝ սեփական նեղ շահերը իրականացնելու ճանապարհին:

Կարծում ենք՝ Հարավային Կովկասի էթնոքաղաքական կոնֆլիկտների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք երեքն էլ տեղակայված են միևնույն տարածաշրջանում, ինչը միմյանց վարակելու վտանգավորությամբ է աչքի ընկնում: Նման իրավիճակում հստակ է, որ ցանկացած դրական շարժ աներևույթ է, մինչդեռ բացասականը վարակիչ է, հետևաբար՝ վտանգավոր: Ուստի տարածաշրջանում մեծ է փոխադարձ անվստահությունը, քաղաքական նպատակների և ազգային շահերի միախառնումը: Դա հնարավոր է վերացնել միայն այն պարագայում, երբ կոնֆլիկտների կարգավորմանը նախորդի հարաբերական կայունությունը՝ առանց մարդկային և նյութական արժեքների ոչնչացման, առանց հանիրավի փոխադարձ մեղադրանքների: